ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԱԲԽԱԶ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա. Ս.

Արաբական աղբյուրները Պարտավ (Բարդաա)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհի վրա հիշատակում են Աբխազ կոչված թագավորությունը և համանուն կայարանը:

Ըստ արաբ աշխարհագետների՝ Աբխազ կայարանը գտնվում էր Պարտավ-Դարբանդ ճանապարհի Շապորան-Ջիսր Սամուր (Սամուր գետի կամուրջը) գծամասում՝ վերջիններից հավասարաչափ հեռավորության վրա[1]: Դարեր ի վեր գործել են Շապորանից Դարբանդ ընթացող երկու մեծ ճանապարհներ: Դրանցից առաջինն անցնում էր այժմյան երկաթգծի ուղղությամբ, որն ընթանում է Կասպից ծովի ափերով, իսկ մյուսը՝ այժմյան ավտոճանապարհի երթուղով, որն անցնում է Ղուբա քաղաքով[2]: Քանի որ Շապորանից հյուսիս Կասպից ծովի առափնյա շրջանը զբաղեցնում էր Մազքթաց աշխարհը[3], իսկ արաբ հեղինակների հիշատակած ճանապարհն անցնում էր Աբխազով և ոչ թե Մազքթաց աշխարհով, ապա պետք է ենթադրել, որ Շապորան-Աբխազ-Ջիսր Սամուր ճանապարհահատվածը համապատասխանում էր այժմյան ավտոճանապարհի ուղեգծին, իսկ Աբխազ թագավորությունը պետք է գտնվեր Մազքթաց աշխարհից արևմուտք: Այս ելակետից էլ սկսենք մեր քննությունը:

Ալ-Իսթահրին վկայում է, թե «(Արմինիայում)…թագավորներ կան, ...որոնցից են Շարվանի թագավորը, որը կոչվում է Շարվանշահ և Աբխազի թագավորը, որը կոչվում է Աբխազշահ»[4], իսկ Իբն Հաուկալը, նկարագրելով Կովկասյան լեռների արևելյան շրջանները, գրում է, որ «Շիրվանի թագավորը Մուհամմադ իբն Ահմադ Ազդիացին է. ապա, նրանից հետո, Աբխազի թագավորն է, իսկ նրա թագավորությունը տարածվում է մինչև Կաբկ լեռների մի քանի լեռնաբազուկները, և գավառը, որը պատկանում է նրան, կոչվում է Աբխազշահ. նրան հարևան է Սանարիայի թագավորը»[5]: Իբն ալ-Ազրակ մատենագիրը, որը գրել է «Մայաֆարիկինի պատմություն»-ը, վկայում է, թե ինքն ուղեկցել է վրաց թագավոր

---

[1] **Al-Istakhri,** *Kitáb masâlik al-mamâlik.-Bibliotheca geographorum arabicorum, editio tertia, pars prima, Lugd. Bat., 1967, p. 192,* **Al-Moqaddasi**, *Kitáb ahsán at-tákasim fi ma'rifat al-akálim (BGA, editio tertia, pars tertia, Lugd. Bat., 1967, p. 381-382),* **Abū 'L-Kāsim Ibn Haukal al-Nasībī,** *Kitáb surát al-a'rd.-BGA, editio tertia, pars secunda, Lugd. Bat., 1967, p. 350.*

[2] *Дорожная карта Кавказского края, составлена и литографирована в военно-типографическом отделе Кавказского военного округа, 20 верст в дюйме, Тифлис, 1870.*

[3] Աշխարհացոյց **Մովսեսի Խորենացւոյ** յաւելուածովք նախնեաց, հրատ. **Ա. Սուքրրյան,** Վենետիկ, 1881, էջ 27:

[4] **Al-Istakhri,** էջ 191:

[5] **Ibn Haukal**, էջ 348:

Դեմետրեին դեպի հյուսիս՝ Ալանների երկիրը, և դեպի արևելք՝ Դարբանդ ու Աբխազ կոչվող երկիրը[6]:

Աբխազ թագավորության մասին տեղեկություններ են պահպանել նաև հայկական աղբյուրները: Հայ պատմիչներից XIII դարի հեղինակ Վարդան վարդապետն իր «Աշխարհացոյց»-ում հաղորդում է, թե «Աբխազ և Մազքըթաց աշխարհին եզր է Վրաց աշխարհին»[7]: Այս վկայությունը հեղինակի երկի ընդարձակ խմբագրության մեջ պահպանվել է այսպես. «Աբխազ Մազքըթաց աշխարհին է. եզր(ն) է Վրաց աշխարհին»[8]: Իսկ Հայոց Արևելից կողմանց պատմիչ Մովսես Կաղանկատվացին, հիշատակելով արաբ զորավար Ջառահի 729 թ. արշավանքը, վկայում է, որ «Ջառահ երկրորդ անգամ մտանէ ընդ Ափխազս ի Խազիրս»[9]:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ անդրադառնալ նաև Կովկասյան լեռների՝ Դարբանդի ամրությունների գոտուն հարող շրջանների նկարագրությանը՝ ըստ Յակուտ ալ-Համավիի, քանի որ այն կարևոր է Աբխազի շրջակա երկրների տեղադրության համար: Արաբ հեղինակը վկայում է, որ Բաբ ալ-Աբվաբի հարևանությամբ՝ ծովի ափին, Մասկաթ անունով երկիրն էր, որի հարևանությամբ գտնվում էր ալ-Լաքզ երկիրը: Վերջիններիս և Բաբ ալ-Աբվաբի միջև տարածվում էր Թաբարսարան շահի երկիրը: Մասկաթից հարավ գտնվում էր Շաբիրան քաղաքը[10]:

Աբխազ թագավորության և նույնանուն կայարանի տեղադրության որոշ փորձեր եղել են: Ակադ. Ս. Երեմյանն Աբխազ թագավորությունը տեղադրում է այժմյան Կուսարչայ, Կուդիալչայ, Կարաչայ և Վելվելիչայ գետերի վերին և միջին հոսանքների շրջանում, իսկ կայարանը՝ «Ղուբա քաղաքի տեղում կամ նրա մոտակայքում»[11]: Նմանատիպ կարծիք է հայտնում նաև արաբ աշխարհագետների երկերի թարգման Ն. Կարաուլովը[12]: Իսկ կովկասագետ Վ. Մինորսկին հավանական է համարում Աբխազ-Լայզան շփոթը[13]: Վերջինս հեղինակը համապատասխանեցնում է այժմյան Լահիջյան հարթավայրին, որը գտնվում է Գարդաման գետի վերին հոսանքի ուղղությամբ, և որը նախկինում Սասանյանների վասալ իշխանություններից մեկն էր[14]:

---

[6] **Минорский В.**, *История Дербенда и Ширвана IX-XI вв., М., 1963, с. 124.*

[7] Աշխարհացոյց **Վարդանայ** վարդապետի, քննական հրատարակութիւն **Հ. Պէրպէրեանի,** համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, էջ 17 (համառոտ խմբ.):

[8] Նույն տեղում, էջ 37 (ընդարձակ խմբ.):

[9] **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը **Վ. Առաքելյանի**, Ե., 1983, էջ 320:

[10] **Jacut's** *Geographisches WΦrterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersbourg und Paris herausgegeben von Ferdinand WЂstenfeld, Leipzig, 1924 (ax in sechs BՊnden), b. I, p. 438:*

[11] **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 31 և Հայաստանը IX-XI դարերում, քարտեզ, Ե., 1987:

[12] **Караулов Н.,** *Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане [Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК) вып. 29, Тифлис, 1901, с. 63, 67, прим.. 60, вып. 38, с. 22].*

[13] **Минорский В**., նշվ. աշխ., էջ 107, ծան. 4, էջ 124:

[14] Նույն տեղում, էջ 107: Տե՛ս նաև Վ. Մինորսկու քարտեզը, նշվ. աշխ., էջ 113:

Փաստորեն, ըստ արաբական աղբյուրների վկայությունների համադրության, Աբխազ թագավորությունը պետք է զբաղեցնելիս լիներ բավական ընդարձակ տարածություն՝ սահմանակից լինելով արևմուտքում Սանարիային (ծանարների երկրին), արևելքում՝ Մազքթաց աշխարհին, իսկ հարավում և հարավ-արևելքում՝ Շիրվանին: Իզուր չէ, որ ալ-Իսթահրին, խոսելով Շիրվանի և Աբխազի թագավորությունների մասին, նշում է, որ դրանց տարածքներն ընդարձակ են[15]: Հիշյալ տեղեկությունները համեմատելով այսօր էլ գոյություն ունեցող ազգությունների բնակության շրջանների հետ՝ նշենք, որ թավասպարները (թաբարսարաններ) բնակվում են Ռուբաս գետի վերին և միջին հոսանքի ավազանում՝ Դարբանդից արևմուտք և հարավ-արևմուտք[16], իսկ լեռնական լաքզերը (ալ-Լաքզի բնակիչները), որոնք, ըստ ալ-Իսթահրու, բնակվում էին Սամուր գետի հովտում[17], ըստ ամենայնի, համապատասխանում են այժմ այդ նույն տարածքում բնակվող լեզգիներին[18]: Թավասպարներից և Բաբ ալ-Աբվաբից հարավ ընկած էր Մազքթաց աշխարհը՝ մինչև Շապորան քաղաքը և Շիրվան երկիրը[19]: Իսկ Մազքթաց աշխարհից դեպի արևմուտք պետք է գտնվեր Աբխազ թագավորությունը: Այն տարածվում էր մինչև Կովկասյան լեռների լեռնաբազուկները[20]:

Ըստ արաբ հեղինակների (մասնավորապես ալ-Իսթահրու) տեղեկությունների՝ Աբխազ կայարանը գտնվում էր Շիրվան կայարանից 2 օրվա ճանապարհ (70-80 կմ) և Ջիսր Սամուրից 12 փարսախ (մոտ 70 կմ) հեռավորության վրա[21]: Քանի որ Աբխազով անցնող ճանապարհը համապատասխանում է այժմյան ավտոճանապարհի երթուղուն, ապա այդ փաստն էլ, ամենայն հավանականությամբ, հիմք է հանդիսացել Աբխազ կայարանի տեղադրությանը Ղուբա քաղաքի տեղում կամ նրա մոտակայքում, այսինքն՝ այժմյան ավտոճանապարհի ուղեգծի վրա:

Աբխազ թագավորության և համանուն կայարանի տեղադրությունը պարզելու, ինչպես նաև անվան առաջացումը լուսաբանելու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև խնդրո առարկա տարածաշրջանի «Աշխարհացոյց»-յան նկարագրությանը, որն այդտեղ գտնվող լեռնաբազկի շրջանում հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք հաջորդականությամբ հիշատակում է հետևյալ ցեղերին. «Թաւասպարոտք, Հեճմատակք, Իժմախք,

---

[15] **Al-Istakhri,** էջ 191:

[16] *История, география и этнография Дагестана XVIII-XIX вв., архивные материалы, М., 1958, с. 104, 152, 197.*

[17] **Al-Istakhri**, էջ 189:

[18] *Этническая карта Дагестанской АССР (Народы мира, этнографические очерки, т. I, Народы Кавказа, М., 1960, с. 416).*

[19] *История, география и этнография Дагестана XVIII-XIX вв., с. 87-90.*

[20] **Ibn Haukal**, էջ 348:

[21] **Al-Istakhri**, էջ 192: Մեկ օրվա ճանապարհաչափը (մեկ անցում) հավասար էր 6-7 փարսախի՝ 35-40 կմ: **Караулов Н.,** *Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане (СМОМПК, вып. 29, с. 59, прим. 21)*: Իսկ մեկ փարսախը հավասար է 5752,8 մետրի: Երկարությունների չափման միավորների մասին տե՛ս **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Զ, Ե., 1985, էջ 185:

Փասխս, Քոսխ[22], Փոքոնակ, Բաքանք, Մազքութք, մինչև ցԿասբից ծովն...»[23]: Փաստորեն, այնտեղ, որտեղ մոտավորապես պետք է գտնվեր Աբխազ թագավորությունը, այսինքն՝ Մազքթաց աշխարհից արևմուտք, «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ մասնավորապես նշված են «Հեճմատակք, Իժմախք, Փասխս, Քոսխ, Փոքոնակ, Բաքանք» ցեղերը: Հայտնի են «Աշխարհացոյց»-յան տեղեկության այս հատվածում հիշատակված թավասպարների և մազքութների բնակության շրջանները: Ինչպես նշեցինք, թավասպարներն այսօր էլ բնակվում են Ռուբաս գետի վերին և միջին հոսանքի ավազանում, իսկ Մազքթաց աշխարհը զբաղեցնում էր Կասպից ծովի՝ Շապորանից հյուսիս ընկած ափամերձ շրջանները: Դուրս է գալիս, որ թավասպարների և մազքութների միջև հիշատակվող ցեղերը, դատելով «Աշխարհացոյց»-ի վկայությունների՝ աշխարհագրական հերթականությամբ կատարված լինելու սկզբունքից, բնակվում էին այդ երկու ցեղերի միջև, այսինքն՝ Մազքթաց աշխարհից արևմուտք, նրա հարևանությամբ, այնտեղ, որտեղ պետք է գտնվեր Աբխազ թագավորությունը[24]:

Մեր կարծիքով, Աբխազ անվանման առաջացումը պետք է բացատրել այդ անվանը փասխերի[25] անվան նմանությամբ («փասխ» անվանումն արաբերենում պետք է հնչեր «ալ-բասխ» ձևով՝ الباسخ) և հիմնականում Արմինիայում

---

[22] Այս ցեղանունն «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության (Սրբոյ հօրն մերոյ **Մովսէսի Խորենացւոյ** Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 605), ինչպես նաև «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ (Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, էջ 27) պահպանվել է «փուսխք» ձևով: Ամենայն հավանականությամբ, հենց դա էլ այդ ցեղի ճիշտ անվանումն է: Փավստոս Բուզանդի երկում պահպանվել է այդ ցեղանվան «փոխք» (Փ**աւստոսի Բիւզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, բնագիրը **Ք. Պատկանյանի,** Ե., 1987, էջ 28), իսկ Եղիշեի երկում՝ «փոսխ» (**Եղիշէ**, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, թարգմանությունը և ծանոթագրությունները **Ե. Տեր-Մինասյանի,** Ե., 1989, էջ 190) տարբերակը:

[23] **Աբրահամյան Ա.,** Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944, էջ 347: Տե՛ս նաև Աշխարհացոյց **Մովսեսի Խորենացւոյ**, էջ 27՝ «Թաւասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փւքանակք, Բագանք, …Մասքութան ազգն»: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության համապատասխան հատվածին մենք կանդրադառնանք Աբխազ իշխանության տեղադրությունից հետո, երբ համեմատություն կանցկացնենք մեր տեղադրության և «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության վկայության միջև:

[24] Ի միջի այլոց, այստեղ մեջբերենք Եղիշեի մի հիշատակությունը, որը կհաստատի «Աշխարհացոյց»-յան վկայության մեջ նշված ցեղերի հիշատակությունն աշխարհագրական հաջորդականությամբ կատարված լինելու փաստը: V դարի պատմիչը, նկարագրելով 450-451թթ. ապստամբությունը ճնշելուն ուղղված պարսից թագավորի ձեռնարկած քայլերը, հաղորդում է, թե նա «յղէր և կոչէր գունդս բազումս ի պահակն Ճորայ, և զՎրաց աշխարհն բովանդակ անդ գումարէր, զզօրսն Լփնաց և զՃղբաց, և զՎատն, զԳաւն և զԳղուարն և զԽրսանն և զՀեճմատակն, զՓասխն և զՓոսխն, և զՓիւքուան և զամենայն զօրսն Թավասպարանն, զլեռնայինն և զդաշտայինն, և զամենայն ամրակողմն լերանցն» (**Եղիշե,** էջ 190): Եղիշեն, փաստորեն, նկարագրությունը կատարում է նույնպես աշխարհագրական հաջորդականությամբ, ուր փասխերը և փոսխերը հիշատակվում են Լփնաց և Ճղբաց երկրներից (Լփնաց և Ճղբաց աշխարհների տեղադրությունը տե՛ս **Հարությունյան Բ.**, Լփինքի տեղադրության հարցի շուրջը (Բանբեր Երևանի Համալսարանի, 1981, թ. 1, էջ 108-124) հյուսիս և թավասպարներից հարավ:

[25] Նաև փուսխերի, քանի որ, դատելով այդ ցեղերի անուններից, վերջիններիս նմանության պատճառը ցեղակցական կապն է, ուստի և նրանց պետք է փնտրել միմյանց հարևանությամբ:

չճանապարհորդած արաբ հեղինակների՝ դրանք միմյանց հետ շփոթելու հավանականությամբ: Ընդսմին, ըստ արաբ աշխարհագետների վկայությունների, պարզելով Աբխազ թագավորության տեղադրությունը՝ դրանով կպարզենք նաև հիշյալ ցեղերի տեղադրությունները[26]:

Դատելով այն իրողությունից, որ, ըստ Իբն Հաուկալի՝ Աբխազ թագավորությունը տարածվում էր մինչև Կովկասյան լեռների լեռնաբազուկները, ինչպես նաև մեր տեղորոշումից, որ Աբխազը պետք է փնտրել Մազքթաց աշխարհից արևմուտք, նշենք, որ ամենահավանականն Աբխազ թագավորության տեղադրությունն է Կովկասյան լեռների արևելյան հատվածի հյուսիսային Կողքային լեռնաշղթայի շրջանում, որը ձգվում է Սամուր գետի միջին հոսանքի շրջանից մինչև Շապորան գետի ակունքի շրջանը: Այդ լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումները տարածվում են ընդհուպ մինչև Ղուբա քաղաքը[27]: Ըստ երևույթին, Աբխազ անվանումն արմատներ էր ձգել այդ տարածքի վրա, ինչի պատճառով Ջառահի արշավանքի կապակցությամբ Կաղանկատվացին հաղորդում է, թե 729 թ. «Ջառահ երկրորդ անգամ մտանէ ընդ Աբխազս ի Խազիրս»: Ահա այդ արշավանքից հետո էլ խազարներն անցան հակահարձակման և ներխուժեցին Արմինիա, որի հարավարևելյան սահմանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում սպանվեց Ջառահը[28]: Որ այս հիշատակությունը, իրոք, վերաբերում էր խնդրո առարկա Աբխազին, փորձենք ապացուցել՝ ճշգրտելով արշավանքի երթուղին:

Պատմագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, թե արշավանքը կատարվել է Թիֆլիսով և Դարիալի կիրճով[29]: Սակայն հազիվ թե կարելի է նման եզրակացության հանգել Բալազուրիի վկայություններից: Վերջինս, հիշատակելով Ջառահի արշավանքը, որին հետևեց խազարների ներխուժումը և սպանվեց Ջառահը, հաղորդում է, թե «նա անցավ Կուրը և շարժվեց մինչև Սամուր գետը, որն անցավ և ուղղվեց խազարների կողմը»[30]: Բացի այս, եթե արշավանքը տեղի ունեցած լիներ Թիֆլիսով և Դարիալի կիրճով, ապա ընդհանրապես Աբխազ անվան հիշատակությունն անտեղի կլիներ Կաղանկատվացու գրքի այդ հատվածում:

Այժմ փորձենք որոշակիացնել Աբխազ թագավորության սահմանները: Նրա հարևաններից Մազքթաց աշխարհը տարածվում էր Դարբանդի ու Շապորան քաղաքի և Ղուբայի ու Կասպից ծովի միջև[31]: Սամուր գետից հյուսիս՝ Ռուբաս գետի վերին և միջին հոսանքի ավազանում, ինչպես տեսանք, տարածվում էր

---

[26] Պետք է նշել, որ ալ-Իսթահրու և Իբն Հաուկալի հիշատակած Աբխազշահի թագավորությունը, ըստ ամենայնի, ավելի ընդարձակ էր, քան փասխերի և փուսխերի բնակության շրջանները: Այդ թագավորության կազմում պետք է ընդգրկված լինեին նաև հարևան ցեղերը, քանի որ այն անմիջականորեն սահմանակցում էր թե՛ Շիրվանի իշխանությանը և թե՛ Մազքթաց աշխարհին:

[27] Ռուսական հինգվերստանոց քարտեզի 3 .7. պլանշետը:

[28] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 320:

[29] **Тер-Гевондян А.,** *Армения и Арабский халифат, Е., 1977, с. 87; Очерки истории Грузии, т. II, Тбилиси, 1988, с. 176;* **Артамонов М.,** *История Хазар, Л., 1962, с. 209.*

[30] بلاذري، كتاب فتوح البلدان، القسم الاول، القاهرة، ١٩٥٦، ص 246.

[31] *История, география и этнография Дагестана XVIII-XIX вв., с. 87-90.*

Թաբարսարան երկիրը, նրանից արևելք՝ Դարբանդը, և դեպի արևմուտք՝ ալ-Լաքզը: Շիրվան երկիրը տարածվում էր Շապորան գետից հարավ ընկած շրջաններում[32]: Այս շրջանների միջև՝ Կովկասյան լեռների արևելյան հատվածի հյուսիսային Կողքային լեռնաշղթայի շրջանում էր գտնվում Աբխազ թագավորությունը: Նրա սահմանները հյուսիսում պետք է հասնեին մինչև Սամուր գետ, հարավ-արևելքում՝ մինչև Շապորան գետի ակունքի շրջան, արևելքում՝ այժմյան Ղուբա քաղաք (ներառյալ): Ինչ վերաբերում է Աբխազ թագավորության արևմտյան սահմանին, ապա այն, դատելով Իբն Հաուկալի հիշատակությունից, թե Աբխազ թագավորությունը տարածվում էր մինչև Կովկասյան լեռների լեռնաբազուկները, եզերվում էր հիշյալ Կողքային լեռնաշղթայի ջրբաժան գծով, որից արևմուտք Կովկասյան լեռներն են իրենց բազուկներով: Այսինքն՝ Աբխազ թագավորությունը զբաղեցնում էր այն լեռնակղզին, որը տարածվում է Կողքային լեռնաշղթայի ջրբաժան գծի, Սամուր գետի միջին հոսանքի և այժմյան Սամուր-դիվիչիի ջրանցքի միջև: Այդ լեռնակղզին բնաշխարհագրական մի ամփոփ միջավայր է, ուստի և հակված ենք կարծելու, որ Աբխազի թագավորը տիրում էր դրան ամբողջությամբ, մանավանդ որ արաբ հեղինակների վկայությունները հաստատում են մեր տեսակետը:

Ինչ վերաբերում է «Աշխարհացոյց»-ում հիշատակված ցեղերին, որոնք բնակվում էին թավասպար-թաբարսարանների և մազքութների միջև, այսինքն՝ այն նույն շրջանում, որտեղ մենք տեղադրեցինք Աբխազ թագավորությունը, ապա պետք է նշել, որ, փաստորեն, նրանք միավորված էին մեկ թագավորության մեջ: Քանի որ այն կոչվում էր Աբխազ, իսկ այդ անվանումն ըստ երևույթին առաջացել էր փասխերի անունը Աբխազիա անվանը նմանեցնելու և դրանք շփոթելու հետևանքով, ուստի և միավորողի դերում պետք է որ հանդես եկած լիներ այդ ցեղի իշխանը:

Պետք է պարզաբանում տալ նաև այն խնդրին, թե արդյո՞ք Աբխազ թագավորությունը սահմանակից էր Ծանարաց երկրին: Մեր վերոբերյալ տեղադրությունը, ի հակադրություն արաբ հեղինակների վկայությունների, բացառում է Աբխազի սահմանակցությունը ծանարների հետ[33]: Ըստ երևույթին, արաբ աշխարհագետների սխալի պատճառն այս դեպքում Աբխազ-Աբխազիա շփոթն է:

Ի վերջո նշենք, որ Կովկասյան լեռների արևելյան հատվածի այն լեռնային շրջանը, որտեղ մենք տեղադրեցինք Աբխազ թագավորությունը, փաստորեն, գրեթե համապատասխանում է այն լեռնաբազկին, որի շրջանում «Աշխարհացոյց»-ը հիշատակում է վերոնշյալ ցեղերին: Ինչ վերաբերում է այդ լեռնաբազկին, ապա այն, ըստ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության, «գնայ զելիւք հիւսիւսոյ, յորում բնակեալ են Թաւասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փլքանակք, Բագանք, ուստի առնու պարիսպն երկայն՝ որ կոչի Ապզուտկաւատ»[34]:

---

[32] Նույն տեղում, էջ 90, **Al-Istakhri**, էջ 187:

[33] Ծանարների երկիրը գտնվում էր Թերեք գետի ակունքների շրջանում, որը համապատասխանում է այժմյան Ղազբեկի շրջանին, **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 56:

[34] Աշխարհացոյց **Մովսեսի Խորենացւոյ**, էջ 27:

Ապզուտկավատն ուսումնասիրողները տեղադրում են Շապորան գետի (այժմ՝ Շաբրան-չայ) և Վելվելիչայի միջև: Այդ պարիսպը սկսվում էր Կովկասյան լեռներից և, անցնելով Շապորան քաղաքի հյուսիսակողմով, ձգվում էր մինչև Կասպից ծովը[35]: Այսինքն՝ այդ լեռնաբազուկը սկիզբ էր առնում թավասպարների երկրից ու, այնուհետև, ձգվում մինչև Վելվելիչայի ու Շապորան գետի միջագետքը: Ինչպես տեսնում ենք, նույնացումը համոզիչ է:

Վերը նշվեց, որ Աբխազ կայարանը նույնացվել է այժմյան Ղուբա քաղաքին կամ տեղադրվել նրա մերձակայքում: Այս հարցում որոշակի կարծիք կազմելու համար անհրաժեշտ ենք համարում քննել արաբ հեղինակների հիշատակած Պարտավ-Դարբանդ ճանապարհի Շապորան-Ջիսր Սամուր գծամասը[36]:

Ինչպես արդեն նշեցինք, Շապորանից ճանապարհը պետք է Աբխազ շարժվեր ոչ թե այժմյան երկաթուղու, այլ ավտոճանապարհի երթուղով, քանի որ այն չէր անցնում Մազքթաց աշխարհով, որը զբաղեցնում էր Շապորանից հյուսիս ընկած ծովափնյա շրջանները: Ուստի՝ Շապորանից Դարբանդ գնացող գլխավոր ճանապարհն անցնում էր այժմյան Ղուբա քաղաքով կամ վերջինիս մոտակայքով, ապա հասնում Խուդաթ գյուղ, որտեղից ճյուղավորվում էր դեպի Կուլարյան կամուրջ և դեպի Խազրա գյուղ: Գլխավոր ճանապարհի առավել ընդունելի ուղեգիծը Ղուբայից Խուդաթով դեպի Կուլարյան կամուրջ ընթացող ավելի կարճ և հարմարավետ ճյուղն է[37]: Այնուհետև ճանապարհը շարժվում էր հյուսիս և Դարբանդով մուտք գործում Խազարական թագավորություն: Ըստ ամենայնի, Կուլարյան կամուրջն էլ հենց համապատասխանում է արաբ հեղինակների հիշատակած Սամուր գետի կամրջին՝ Ջիսր Սամուրին[38]:

---

[35] **Երեմյան Ս.,** նշվ. աշխ., էջ 37, **Հարությունյան Բ.,** Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Ե., 2001:

[36] Ըստ **Ալ-Իսթահրու**՝ այդ ճանապարհն ուներ այս տեսքը. «Բարդաայից մինչև Բարզանջ 18 փարսախ է և Բարզանջից Կուրի գետանցով մինչև Շամախիա՝ 14 փարսախ, Շամախիայից մինչև Շարվան 3 օրվա ճանապարհ է և Շարվանից մինչև Աբխազ՝ 2 օրվա ճանապարհ, Աբխազից մինչև Ջիսր Սամուր 12 փարսախ է և Ջիսր Սամուրից մինչև Բաբ ալ-Աբվաբ՝ 20 փարսախ»: (**Al-Istakhri**, էջ 192) Շիրվան քաղաքը գտնվում էր այժմյան Շիրվան գյուղի տեղում՝ Շաբրան-չայ գետի ափին, իսկ նրանից արևմուտք՝ նույն Շաբրան-չայ գետի ափին էր գտնվում Շապորան քաղաքը (**Երեմյան Ս**., նշվ.աշխ., էջ 73-74, ռուսական հինգվերստանոց քարտեզ Լ. 7. պլանշետ: Յակուտ ալ-Համավին Շիրվան կայարանի փոխարեն հիշատակում է Շապորանը (**Jacut**, III, էջ 317): **Ս. Երեմյանը** ճանապարհի ուղեգիծը տանում է միաժամանակ և՛ Շիրվանով, և՛ Շապորանով, ինչն ընդունելի տարբերակ է՝ կապված այդ երկու քաղաքների՝ միմյանց բավական մոտ գտնվելու հետ: Ըստ երևույթին, ճիշտը Շապորան տարբերակն է, քանի որ նույնիսկ ավելի ուշ՝ XVIII դարում, Ղուբայից Շամախի գնացող ճանապարհն անցնում էր հենց Շապորանով ¥**Симонович Ф.,** *Описание южного Дагестана (1796), История, география и этнография Дагестана XVIII-XIX вв., с. 154-155):*

[37] Ռուսական հինգվերստանոց քարտեզի 3.7. պլանշետը:

[38] Արաբ հեղինակների երկերի թարգման Ն. Կարաուլովը Ջիսր Սամուրը նույնացնում է Սամուր գետի ամբարտակի հետ, որի տեղում այժմ պատնեշ է, որտեղով անցնում է երկաթուղին (**Караулов Н.,** *Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане, СМОМПК, вып. 38, Тифлис 1908, с. 125, прим. 71; Атлас СССР, Кавказ, карта, М., 1985, с. 42*): Իսկ Ս. Երեմյանը Ջիսր Սամուրը նույնացնում է Աղվանից թագավորության Չողա մայրաքաղաքի հետ և

Աբխազ կայարանի տեղադրությունը բարդանում է՝ կապված արաբ հեղինակների հիշատակած սխալ հեռավորությունների հետ: Այսպես, ինչպես տեսանք, ալ-Իսթահրին, Շիրվանից (պետք է լինի Շապորան) Աբխազ հեռավորությունը նշում է 2 օրվա ճանապարհ (մոտ 35-40 կմ), իսկ Աբխազից Ջիսր Սամուր հեռավորությունը՝ 12 փարսախ (մոտ 70 կմ), ինչն իրականությանը համապատասխանել չի կարող, իսկ ալ-Մուկադդասին այդ հեռավորությունները նշում է հավասարաչափ՝ 2-ական անցում[39]: Ըստ էության, չնայած նշված հեռավորությունների ակնհայտ սխալին[40], ուսումնասիրողներին հարկ է եղել Աբխազ կայարանը տեղադրել այնպիսի վայրում, որը, եթե չէր էլ համապատասխանի վերոհիշյալ հեռավորություններին, ապա գոնե կգտնվեր Շապորանից և Ջիսր Սամուրից մոտավորապես հավասար հեռավորությունների վրա: Եվ, ահա՛, Աբխազ կայարանը տեղադրվել է Ղուբա քաղաքում կամ նրա մերձակայքում, այսինքն՝ այնպիսի տեղում, որը գտնվում էր Շապորանից Սամուր գետ ճանապարհահատվածի միջնամասում: Ըստ այսմ, պետք է ընդունել, որ ամենահավանականը, կայարանի՝ այժմյան Ղուբա քաղաքի տեղում կամ մերձակայքում տեղադրությունն է: Սակայն այն ավելի կոնկրետացնելով՝ նշենք, որ կայարանը ամենայն հավանականությամբ հնում գտնվում էր քաղաքից (կամ նախկինում նրա տեղում գտնվող բնակավայրից) դուրս՝ անմիջապես ճանապարհի հարևանությամբ: Ավելի ուշ շրջանում, երբ Ղուբա քաղաքն ընդարձակվեց, ճանապարհն արդեն անցնում էր քաղաքի միջով: Համենայն դեպս, նույնիսկ XVIII դ. վերջին դեռևս ճանապարհն ընթանում էր քաղաքի մերձակայքով[41]:

Այսպիսով՝ արաբական տիրապետության օրոք Կովկասյան լեռների արևելյան հատվածի Կողքային լեռնաշղթայի շրջանում կազմավորվել էր մի թագավորություն, որն արաբ հեղինակներն անվանում են Աբխազ: Այդ Կողքային լեռնաշղթան գրեթե համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի հիշատակած այն լեռնաբազկին, որի շրջանում թավասպարների և մազքութների միջև բնակվում էին փասխերը և այլ ցեղեր: Աբխազ անունն առաջացել է արաբ հեղինակների կողմից այն փասխերի անվան հետ շփոթելու հետևանքով: Աբխազ անվանումը պահպանվել է նաև հայ պատմիչների երկերում: Աբխազ թագավորության միջով էր անցնում Պարտավ-Դարբանդ ճանապարհը, որի կայարաններից մեկը կոչվում էր

տեղադրում այժմյան Բիլիջի երկաթուղային կայարանից ոչ հեռու գտնվող Թոփրակ-կալեի ավերակների տեղում (տե՛ս **Երեմյան Ս.,** «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերա-կանգնման փորձ, (Պատմա-բանասիրական հանդես, 1973, թ. 2, էջ 273-274): Սակայն, ըստ Շապորանից Դարբանդ ճանապարհի՝ մեր ընդունած ուղեգծի՝ Ջիսր Սամուրը պետք է համապատասխաներ Կուլարյան կամրջին:

[39] **Al-Moqaddasi**, էջ 381: Մեկ անցումը նույնն է, ինչ մեկ օրվա ճանապարհը:

[40] Սխալն ակնհայտ է այն պատճառով, որ Աբխազ կայարանի որևէ տեղադրության դեպքում նախորդ և հաջորդ կայարաններից նրա հեռավորությունն այդ չափերով անհնար է:

[41] Այս մասին վկայում է Ֆ. Սիմոնովիչն իր ուղեգրության մեջ (**Симонович Ф.**, նշվ. աշխ., էջ 154):

Աբխազ: Վերջինս գտնվում էր այժմյան Ղուբա քաղաքի հարևանությամբ՝ անմիջապես ճանապարհի մոտ:

ЦАРСТВО АБХАЗ АРАБСКИХ ИСТОЧНИКОВ

ЕГИАЗАРЯН А. С.

Резюме

Арабские средневековые авторы упоминают царство Абхаз, которое находилось к югу от реки Самур и на западе страны массагетов. Одна из станций большой торговой дороги, ведущей из Партава в Дербенд, также называлась Абхаз. По вопросу локализации данного царства мнения исследователей расходятся. С. Еремян считает, что оно находилось на верхних и средних течениях рек Кусарчай, Кудиалчай, Карачай и Велвеличай. Однако В. Минорский утверждает, что там такого царства не существовало. Следует отметить, что это царство упоминается и в армянских источниках (Мовсес Каланкатваци, Вардан Аревелци). На наш взгляд, царство Абхаз находилось в районе Северного Бокового хребта восточной части Большого Кавказа, что совпадает с данными, приводимыми в “Ашхарацуйц”-е, где говорится о том, что между таваспарами (табасараны) и массагетами жило племя Пасхов. По всей вероятности, арабские авторы, многие из которых не были на Кавказе, просто спутали имя “Абхаз” с именем Пасхов.

Что же касается станции Абхаз, то она, видимо, находилась близ Кубы, на маршруте нынешней автодороги.